«ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ»
ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Հ Ա Ս Տ Ա Տ Վ Ա Ծ Է

«ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՍՊԸ Գլխավոր տնօրենի
«15» հունվարի 2021 թ. թիվ 007-21L հրամանով

«ԿԱՍԿՈ ՊԼՅՈՒՍ» ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

«ԿԱՍԿՈ ՊԼՅՈՒՍ» պայմանագրով փոխհատուցվում են ՃՏՊ-ի արդյունքում տուժող կողմ հանդիսացող ավտոտրանսպորտային միջոցին պատճառված գույքային վնասները, որոնք գերազանցում են ԱՊՊԱ կամ այլ ապահովագրության պայմանագրերով հատուցման ենթակա գումարի առավելագույն չափը:

Ապահովադիր

Ապահովադիր կարող է հանդիսանալ ավտոտրանսպորտային միջոցի սեփականատեր հանդիսացող կամ իրավական այլ հիմքով ավտոտրանսպորտային միջոցի տիրապետման, տնօրինման, օգտագործման (շահագործման) իրավունք ունեցող ֆիզիկական կամ իրավաբանական անձը:

Ապահովագրական հատուցման չափ

Հատուցումն իրականացվում է տուժող կողմի ավտոտրանսպորտային միջոցին պատճառված վնասի մեծության և ԱՊՊԱ կամ այլ պայմանագրի գծով ստացած հատուցման տարբերության չափով՝ ապահովագրական ծածկույթի սահմաններում:

Ապահովագրական գումար և ապահովագրավճար

ՀՀ դրամ

Ապահովագրական գումար	Ապահովագրության ժամկետ	Ապահովագրավճար	Միջնորդավճարի չափ (%-ով՝ ապ.վճարի նկատմամբ)
1 250 000	10 օրից-6 ամիս	4 000	35%
	6-12 ամիս	7 000	35%
2 000 000	10 օրից-6 ամիս	6 000	35%
	6-12 ամիս	10 000	35%

Ոչ պայմանական չհատուցվող գումար

Չի կիրառվում

Ապահովագրավճարի վճարման կարգ

Միանվագ, ապահովագրության պայմանագրի կնքման պահին

Պահանջվող փաստաթղթեր և տեղեկություններ

- Ավտոտրանսպորտային միջոցի տեխնիկական անձնագիր կամ հաշվառման հայտարարագիր,
- Ֆիզիկական անձի դեպքում՝ անձը հաստատող փաստաթղթեր
- Իրավաբանական անձի դեպքում՝ պետ գրանցման վկայականը
- Հետախոսահամար
- Էլեկտրոնային փոստի հասցե